ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՀՀԱՆ-ՄԱԾՁԲ-25/22

ք. Երևան « 07» ապրիլ 2025թ.

ՀՀ արդարադատության նախարարությունը, ի դեմս գլխավոր քարտուղար Էդգար Հովսեփյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Փրոգրին Քոնսեփթս» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Հմայակ Ավագյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է բնապահպանական պլանավորման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս կողմից մատուցված պատշաճ ծառայության դիմաց վճարման ենթակա գումարները, իսկ վճարան ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու պատշաճ մատուցված ծառայության դիմաց վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված վճարման ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության պատշաճ մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1) և հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (հավելված N 3):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 950 000 (ինը հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է պայմանագրի 3-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում՝ ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 26-ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու

դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:[1] Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն սահմանված ժամկետում չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորություններն ամբողջությամբ և պատշաճ՝ պայմանագրով սահմանված պահանջներին համապատասխան կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի գրավոր առաջարկիառկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի համար ծառայության մատուցման պահանջը չի վերացել, իսկ Կատարողի գրավոր առաջարկըներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավելի քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման շրջանակներից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված

հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն ուղարկում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Կատարողն իրավունք ունի պայմանագրի կնքումից հետո Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 48-րդ գլխով սահմանված դեպքերում և կարգով կատարել գնման պայմանագրից ծագող դրամական պահանջի զիջում՝ պահանջի զիջման դիմաց ֆինանսավորման (ֆակտորինգի) պայմանագրի (այսուհետ՝ ֆակտորինգի պայմանագիր) հիման վրա: Ֆակտորինգի պայմանագիրը պետք է սահմանի, որ ֆինանսական գործակալը համաձայն է, որ պայմանագրով նախատեսված հիմքերի առկայության դեպքում Պատվիրատուն վճարումներն իրականացնելիս ապահովի Կատարողի նկատմամբ տույժերի ու տուգանքների հաշվարկումը և հաշվանցումը վճարվելիք գումարների հետ՝ անկախ պահանջը զիջված լինելու հանգամանքից: Ընդ որում, ֆակտորինգի պայմանագրի հիման վրա պահանջի զիջման մասին գրավոր ծանուցումը (հավելված N 4) ստանալու դեպքում Պատվիրատուն պայմանագրով սահմանված վճարումը կատարում է ֆինանսական գործակալին, եթե ծանուցումը ստացվել է Պատվիրատուի կողմից վճարման հանձնարարագիրը և արձանագրության պատճենը լիազորված մարմնի գանձապետական համակարգ մուտքագրելու օրվան նախորդող օրը:

7.11 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

7.12 Սույն պայմանագիրը կազմված է 13 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 3.1 և N 4 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.13 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ արդարադատության նախարարություն	«Փրոգրին Քոնսեփթս» ՍՊԸ
ՀՀ ք. Երևան, Վ.Սարգսյան 3/8	ք. Երևան, Քաջազնունու 2, բն.20
ՀՀ ֆինանսների նախարարության	«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ
գործառնական վարչություն	Հ/Հ 220410510469000
Հ/Հ՝ 900011018547	ՀՎՀՀ 02849541
ՀՎՀՀ՝ 02506264	
_____ Է. Հովսեփյան	_____ Հ. Ավագյան
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ

Հավելված N 1
« 07 » ապրիլի 2025թ. կնքված
ՀՀԱՆ-ՄԱԾՁԲ-25/22 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր քանակը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	մատուցման	
						հասցեն	ժամկետը**
1	90711160/1	ներկայացված է ստորև	դրամ	1	950 000	ք.Երևան, Վ. Սարգսյան 3/8	մինչև 07.05.2025թ.

տեխնիկական բնութագիր

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ

Բնապահպանական եւ սոցիալական կառավարման մասնագետի ներգրավման

1. Ներածություն եւ նախադրյալներ

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությունը (ԱՆ) եւ Համաշխարհային բանկը (ՀԲ) պատրաստում են Հայաստանում արդարադատության ոլորտի բարեփոխմանն ուղղված ներդրումային նոր ծրագիր: Ծրագրի զարգացման նպատակն (ԾԶՆ) է բարձրացնել դատական ծառայությունների որակը, արդյունավետությունը եւ մատչելիությունը: Ծրագիրը բաղկացած է 4 բաղադրիչներից.

Բաղադրիչ 1. Դատական մարմինների բարեվարքության եւ աշխատանքի արդյունավետության ամրապնդում. Այս բաղադրիչն առնչվում է ծառայությունների մատուցման որակի հետ կապված ընթացիկ խնդիրներին, ներառյալ՝ ներկայացուցչական դատական անձնակազմը եւ դատարանների հավասար մատչելիությունը՝ փաստացի գտնվելու վայրից եւ սոցիալական կարգավիճակից անկախ: Այս բաղադրիչը կիրականացվի ԱՆ-ի կողմից՝ ԲԴԻՍ-ի դատական դեպարտամենտի հետ համագործակցությամբ: ԲԴԻՍ-ի հիմնական ստորաբաժանումներն են Դատական պրակտիկայի վերլուծության բաժինը, Մշտադիտարկման եւ դատական վիճակագրության բաժինը, Դատավորների թեկնածուներին եւ առաջխաղացմանը վերաբերող հարցերի բաժինը եւ Դատավորների նկատմամբ վարույթներին առնչվող հարցերի բաժինը: Այս բաղադրիչի շրջանակներում իրականացվող միջոցառումները կօգնեն՝ 1) ամրապնդել ղեկավարման, կառավարման եւ բարեվարքության կառուցվածքները, 2) մեծացնել կանանց ներկայացուցչությունը դատական համակարգում եւ ղեկավար պաշտոններում, եւ 3) ընդլայնել հատուկ կարիքներ ունեցող խմբերի, այդ թվում՝ կանանց, երեխաների եւ անապահով խմբերի աջակցության ծառայությունները:

Բաղադրիչ 2. Քաղաքացիների եւ գործարարության համար «էլեկտրոնային դատարանի» ծառայությունների մշակում. Այս բաղադրիչը կապահովի դատական գործունեության համար ապահով եւ հուսալի ՏՏ միջավայրի զարգացմանն ուղղված ֆինանսավորումը՝ դատարանների ներքին կարիքները բավարարելու եւ քաղաքացիներին եւ գործարարությանն ուղղված ծառայությունների մատուցումը խթանելու նպատակով: Գործարարության գործընթացների արդիականացումը կհամապատասխանի Հայաստանի համապետական մոտեցմանը եւ Հայաստանի տեղեկատվական համակարգերի գործակալության (ՀՏՀԳ) կողմից մշակված ձեռնարկությունների ճարտարապետությանը (ՁՃ). կանդրադառնա դատական համակարգում մասնատված ՏՏ ճարտարապետությանը՝ միասնական, համատեղելի ՏՏ միջավայր ստեղծելու նպատակով. նաեւ կընդլայնի դատական ծառայությունները՝ քաղաքացիների եւ գործարարության համար: Ներդրումները, մասնավորապես, կընդգրկեն կանանց, երեխաների եւ անապահով խմբերի կարիքները եւ կապահովեն էներգաարդյունավետության չափանիշների համապատասխանությունը: Նշված բաղադրիչը կիրականացվի ԱՆ-ի կողմից՝ ԲԴԻՍ-ի դատական դեպարտամենտի կազմում՝ Դատական դեպարտամենտի համապատասխան

միավորների հետ սերտ համագործակցությամբ:

Բաղադրիչ 3. «Խելացի դատարաններ». Տվյալ բաղադրիչը հնարավորություն կտա կատարելագործել դատական քարտեզը, սահմանել դատարանների ձեւավորման չափորոշիչները եւ արդիականացնել դատական հաստատությունները՝ ապահովելով վերջիններիս համապատասխանությունը իրենց նշանակությանը, ունենալ թվային աջակցություն եւ Հայաստանի ամբողջ տարածքում հավասար հասանելիություն ապահովելու միջոցով բավարարել կանանց, երեխաների եւ անապահով խմբերի համապատասխան կարիքները: Ֆիզիկական ենթակառուցվածքների արդիականացումը թույլ կտա ընդգրկել կլիմայի մեղմացման եւ կայունության ապահովման միջոցառումներ՝ դրա հետ կապված ջերմոցային գազերի (ՋԳ) արտանետումները նվազեցնելու եւ կլիմայական փոփոխություններով պայմանավորված ծայրահեղ շոգի ու ջրհեղեղների դեմ պայքարելու նպատակով: Այն կունենա էներգաարդյունավետ դիզայն (ջեռուցման, օդափոխության եւ օդորակման համակարգեր, «խելացի» լուսավորության կառավարման համակարգեր), ջրային ռեսուրսների պահպանում, վերամշակված նյութերի օգտագործում, հովացման միջոցներ, ինչպիսիք են կանաչ տանիքները (հնարավորության դեպքում), ստվերում եւ անդրադարձնող ապակեպատում. թափոնների վերամշակման պլան՝ արդիականացման ընթացքում եւ դրանից հետո նյութերը վերամշակելու կամ վերաօգտագործելու համար, կայուն ջրահեռացման համակարգեր՝ օգտագործելով պարագծային ուղիներ, եւ փափուկ կանաչապատում՝ ջրի հոսքը նվազեցնելու համար: Այս բաղադրիչով նախատեսված գործողությունները կիրականացվեն ԱՆ-ի կողմից՝ ԲԴԽ-ին առընթեր Դատական դեպարտամենտի համապատասխան միավորների հետ սերտ համագործակցությամբ:

Բաղադրիչ 4. Ծրագրի կառավարումը. Տվյալ բաղադրիչը կապահովի ծրագրի կառավարումը, արտաքին աուդիտը, մշտադիտարկումն ու հաշվետվությունը, ինչպես նաեւ բնապահպանական եւ սոցիալական երաշխիքների վերահսկումը: Սույն բաղադրիչն իրականացվելու է ԱՆ-ի կողմից:

ԱՆ-ն գտնվում է ծրագրի համար անհրաժեշտ բնապահպանական եւ սոցիալական (ԲՍ)[E&S] կառավարման փաստաթղթերի պատրաստման գործընթացում եւ փնտրում է խորհրդատվական ծառայություններ՝ փաստաթղթերի ամբողջական փաթեթի մշակման համար:

2. Առաջադրանքի նպատակները

Սույն առաջադրանքի նպատակն է կազմել ընդհանուր/ձեւանմուշային ԲՍԿԾ, ինչպես նաեւ ԲՍ ոլորտում ռիսկերի եւ ազդեցությունների նույնականացման եւ դիտարկման համար համապատասխան գործիք, ԱԿԸ եւ ՇՆԾ տարրեր՝ նախագծի համար: ԲՍԿԾ-ն պետք է համապատասխան լինի ՀԲ-ի բնապահպանական եւ սոցիալական շրջանակներին (ԲՍՇ), Հայաստանի օրենսդրական դաշտին եւ կանոնակարգերին, ծրագրի շրջանակներին եւ առաջարկվող գործողություններին, ինչպես նաեւ տեղանքին հատուկ գործողություններին բնորոշ տեղական ԲՍ համատեքստին:

Սույն ընդհանուր/ձեւանմուշային ԲՍԿԾ-ն օգտագործվելու եւ թարմացվելու է ծրագրի իրականացման ընթացքում տեղանքին հատուկ ԲՍԿԾ-ներ կազմելու համար: ԲՍ-ի ռիսկերի եւ ազդեցության գնահատման գործիքը, աշխատանքի կառավարման ընթացակարգերը (ԱԿԸ) եւ շահառուների ներգրավվածության ծրագրի (ՇՆԾ) տարրերը նույնպես կներառվեն ծրագրի շահագործման ձեռնարկում (ԲՕՄ)՝ ծրագրի իրականացման մասին տեղեկացնելու նպատակով:

3. Աշխատանքի շրջանակը

ԱՆ-ն (գործատուն) ծառայությունների համար դիմում է ԲՍ մասնագետին՝ ԲՍԿԾ-ի եւ հետեւյալ տարրերի մշակման գործում գործատուին օգնելու նպատակով: Մասնագետն իրականացնում է հետեւյալ աշխատանքները.

i) նախագծում է ընդհանուր/ձեւանմուշային ԲՍԿԾ, որը inter alia (ի թիվս այլնի) ներառելու է հետեւյալ ԲՍ տարրերը.

ՇՆԾ եւ ԱԿԸ տարրեր, որոնք վերաբերում են ծրագրի՝ տեղանքին հատուկ գործողություններին, համապատասխանաբար ՀԲ-ի բնապահպանական եւ սոցիալական (ԲՍՍ)՝ 10-րդ եւ 2-րդ ստանդարտներին համապատասխան, ներառելով, բայց չսահմանափակվելով աշխատողների եւ հասարակության բողոքների մեխանիզմներով, ինչպես նաեւ սեռական շահագործման եւ բռնության/սեռական ոտնձգությունների կանխարգելման միջոցառումներով (ՍՇՍԲ/ՍՈ)

ԲՍ ռիսկերի դիտարկման ու դասակարգման գործիք.

ii) քննարկում է ԲՍԿԾ նախագիծը ԱՆ-ի եւ ԿԲ-ի ներկայացուցիչների հետ՝ ներառելով ցանկացած մեկնաբանություն եւ հասարակական արձագանք.

iii) կազմակերպում է ԲՍԿԾ-ի շուրջ առցանց հանրային խորհրդատվություն եւ խորհրդակցում՝ ազգային

մակարդակով, եւ համագործակցում է համապատասխան շահառուների հետ.

iv) նախապատրաստում է առցանց խորհրդատվության արձանագրություն, ընդգրկում մեկնաբանություններ եւ հասարակական արձագանք, վերանայում եւ վերջնական տեսքի բերում ԲՍԿԾ-ն:

ԲՍԿԾ-ի ընդհանուր/ձեւանմուշային ծրագիրը պետք է ներառի ծրագրին առնչվող հավանական ԲՍ ռիսկերն ու դրանց մեղմացմանն ուղղված միջոցառումները, համապատասխան իրավական եւ ինստիտուցիոնալ շրջանակը, ինչպես նաեւ ազգային օրենսդրության եւ ՀԲ-ի տարր հանդիսացող ԲՍՇ-ի միջեւ առկա բացերը լրացնելու ուղղությամբ իրականացվող միջոցառումները: Այն նաեւ պետք է նշի ծրագրի շրջանակներում ԲՍ մշտադիտարկման եւ հաշվետվությունների իրականացման միջոցառումները, ինչպես նաեւ ծրագրի իրականացման հետ կապված դերերն ու պարտավորությունները:

4. ԲՍ ռիսկերն ու Ծրագրի գնահատումը

Ծրագրի ընդհանուր ԲՍ ռիսկը չափավոր է, եւ ծրագրի շրջանակներում առաջ են գալիս հետեւյալ բնապահպանական եւ սոցիալական ստանդարտները (ԲՍՍ-ներ).

i) ԲՍՍ1՝ ԲՍ ռիսկերի եւ ազդեցությունների գնահատում եւ կառավարում,

ii) ԲՍՍ2՝ Աշխատուժի եւ աշխատանքային պայմաններ,

iii) ԲՍՍ3՝ Ռեսուրսների արդյունավետություն եւ աղտոտման կանխարգելում ու կառավարում,

iv) ԲՍՍ4՝ Համայնքի առողջություն եւ անվտանգություն,

v) ԲՍՍ8՝ Մշակութային ժառանգություն,

ԲՍՍ10՝ Շահառուների ներգրավվածություն ու տեղեկությունների բացահայտում:

Բնապահպանական առանցքային ռիսկերն են՝ i) մասնագիտական առողջությունը եւ անվտանգությունը (ՄԱԱ), որոնք կապված են գոյություն ունեցող դատարանների շենքերում վերանորոգման աշխատանքների հետ, որոնցից մի քանիսը, հնարավոր է, կառուցվել են խորհրդային տարիներին եւ կարող են անվտանգության տեսանկյունից վտանգ ներկայացնել ներկայիս շինարարական պահանջներին չհամապատասխանելու պատճառով՝ հատկապես սեյսմիկ անվտանգության տեսանկյունից, ii) ռիսկեր՝ կապված դատարանների շենքերի հետ, որոնցում կարող են գտնվել պատմական նշանակություն ունեցող կամ վերանորոգման աշխատանքների ընթացքում մանրակրկիտ խնամք պահանջող արժեքավոր որմնանկարներ, iii) վտանգավոր թափոնների, ինչպիսիք են՝ ասբեստ պարունակող նյութերը (ԱՍՊ), ինչպես նաեւ ոչ վտանգավոր շինարարական թափոնների առաջացման հետ կապված ռիսկերը, iv) էլեկտրոնային թափոնների (էլեկտրոնային թափոններ)[2] առաջացման հետ կապված ռիսկերը, v) փոշու, աղմուկի եւ թրթռումների առաջացման հետ կապված ռիսկերը: Դատարանների շենքերը նախագծելիս պետք է հաշվի առնել նաեւ էներգաարդյունավետության բարելավման լուծումները, որոնք պետք է արտացոլված լինեն ԲՍԿԾ-ում:

Առանցքային սոցիալական ռիսկերն են՝ i) վերանորոգման փուլում գտնվող դատարանների շենքերի անհասանելիությունը եւ հասանելի նախագծման ստանդարտների մշակման հնարավորությունների բացակայությունը, ii) դատական բարեփոխումներից եւ ծրագրի շրջանակներում մատուցվող կամ ընդլայնվող թվային ծառայություններից բացառման ռիսկը, iii) ծրագրի եւ ԲՔՄ-ի առավելությունների անհավասար հասանելիության ռիսկը՝ բոլոր շահագրգիռ կողմերի եւ ծրագրի շահառուների համար: Ակնկալվում է, որ նախագծի իրականացման շրջանակներում ի հայտ չեն գա հողի ձեռքբերման, վերաբնակեցման կամ աշխատուժի ներհոսքի ռիսկեր: ՍՇՍԲ/ՍՈ-ն գնահատվում է որպես ցածր ռիսկայնություն ունեցող:

ԲՍ մասնագետն աշխատում է ԱՆ-ի եւ ՀԲ-ի հետ սերտ համագործակցությամբ՝ զեկուցելով ԱՆ-ում ծրագրի համակարգողին:

5. Վերջնարդյունքները

ԲՍ մասնագետը պատրաստում է հետեւյալ փաստաթղթերը.

i) ընդհանուր/ձեւանմուշային ԲՍԿԾ, որն օգտագործվելու է ծրագրի շրջանակներում իրականացվող

[2] Ծրագրի իրականացման ընթացքում էլեկտրոնային թափոնների կառավարման ծրագիրը մշակվելու է որպես ինքնուրույն փաստաթուղթ եւ ներառված չէ սույն տեխնիկական առաջադրանքի շրջանակներում:

գործունեության համար՝ տեղանքին հատուկ ԲՍԿԾ կազմելու նպատակով,

ii) ԲՍԿԾ-ի մաս կազմող՝ տեղանքին հատուկ գործողություններին բնորոշ ՇՆԾ եւ ԱԿԸ տարրեր,

iii) ԲՍ սքրինինգի եւ ռիսկերի դասակարգման գործիք՝ որպես ԲՍԿԾ-ի մաս,

iv) հանրային առցանց խորհրդատվության արձանագրություն,

v) վերանայված եւ վերջնական տեսքի բերված ԲՍԿԾ, որը հիմնված է Համաշխարհային բանկի կողմից վերանայման, շահագրգիռ կողմերի ներգրավվածության եւ խորհրդատվության վրա:

Սկզբնական նախագծերը ներկայացնել ԱՆ-ի եւ ՀԲ-ի քննարկմանը՝ պայմանագիրը կնքելուց հետո՝ 15 օրվա ընթացքում: Փաստաթուղթը վերջնական տեսքի բերել մեկնաբանություններ եւ հասարակական արձագանք ստանալուց հետո՝ 5 օրվա ընթացքում: Փաստաթղթերը վերջնական տեսքի բերելուց անմիջապես հետո կազմակերպել խորհրդատվություններ՝ տրամադրելով 10 օր՝ պարզաբանման համար: Հասարակական արձագանքների ամփոփում՝ 2 օրվա ընթացքում, ներառյալ՝ առցանց խորհրդատվությունների արձանագրությունների պատրաստումը: Վերջնական փաստաթղթերը ներկայացնել ԱՆ մինչեւ 2025 թվականի մայիսի 7-ը:

6. ԲՍ մասնագետից պահանջվող հմտությունները

Տվյալ առաջադրանքի մասնակից մասնագետները պետք է ունենան հետեւյալ որակավորումներն ու հմտությունները.

- բարձրագույն կրթություն բնական/հասարակական գիտությունների ոլորտում,
- տվյալ առաջադրանքին համապատասխան՝ առնվազն 3 տարվա աշխատանքային փորձ,
- համապատասխան փորձ ԲՍ խնդիրների առաջնահերթության սահմանման, գործիքների եւ մեթոդաբանության մշակման, ԲՍ փաստաթղթերի պատրաստման, ԲՍ ռիսկերի եւ ազդեցությունների գնահատման եւ կառավարման ոլորտներում,
- միջազգային կազմակերպությունների հետ համատեղ մշակվող ծրագրերում մասնակցություն ունենալը համարվում է առավելություն,
- տվյալների հավաքագրման եւ խորհրդակցության նպատակով շահագրգիռ կողմերի հետ հաղորդակցվելու ունակություն,
- բանավոր եւ գրավոր հայերենի եւ անգլերենի լավ իմացություն,
- համակարգչային գրագիտություն (Մայքրոսոֆթ օֆիս [MS Office]),

Համաշխարհային բանկի կամ այլ բազմակողմ/երկկողմ զարգացման կազմակերպությունների կողմից ֆինանսավորվող նախագծին նախնական մասնակցությունը կդիտարկվի որպես առավելություն:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ արդարադատության նախարարություն ՀՀ ք. Երևան, Վ.Սարգսյան 3/8 ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն Հ/Հ 900011018547 ՀՎՀՀ 02506264	«Փրոգրին Քոնսեփթս» ՍՊԸ ք. Երևան, Քաջազնունու 2, բն.20 «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ Հ/Հ 22041051046900 0 ՀՎՀՀ 02849541
Է. Հովսեփյան /ստորագրություն/ Կ.Տ	Հ. Ավագյան /ստորագրություն/ Կ.Տ

Հավելված N 2
« 07 » ապրիլի 2025թ. կնքված
ՀՀԱՆ-ՄԱԾՁԲ-25/22 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության												
հրավերով նախատես-ված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2025թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**									
			ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	90711160/1	Բնապահպանական պլանավորում	950 000	950 000	950 000	950 000	950 000	950 000	950 000	950 000	950 000	950 000

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ արդարադատության նախարարություն
ՀՀ ք. Երևան, Վ.Սարգսյան 3/8
ՀՀ ֆինանսների նախարարության
գործառնական վարչություն
Հ/Հ 900011018547
ՀՎՀՀ 02506264

Է. Հովսեփյան
/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

«Փրոգրին Քոնսեպթս» ՍՊԸ
ք. Երևան, Քաջազնունու 2, բն.20
«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ
Հ/Հ 220410510469000
ՀՎՀՀ 02849541

Հ. Ավագյան
/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված 3
« 07 » ապրիլի 2025թ. կնքված
ՀՀԱՆ-ՄԱԾՁԲ-25/22 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.

Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1

« 07 » ապրիլի 2025թ. կնքված
ՀՀԱՆ-ՄԱԾՁԲ-25/22 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Հավելված N 4
« 07 » ապրիլի 2025թ. կնքված

ԾԱՆՈՒՑՈՒՄ

_____ հայտնում է, որ .
ֆինանսական գործակալի անվանումը

1. _____-ի և _____-ի միջև «--» 20 թ. կնքված
պատվիրատուի անվանումը կատարողի անվանումը

«---------/---------» ծածկագրով պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) շրջանակում իր և

_____-ի միջև «--» 20 թ-ին կնքվել է «----------» ծածկագրով ֆակտորինգի
կատարողի անվանումը

պայմանագիրը,

2. համաձայն է Պայմանագրի 7.12 կետով սահմանված պահանջներին:

_____ _____
ֆինանսական գործակալի անվանումը (ղեկավարի պաշտոնը, անուն ազգանունը) ստորագրությունը

Կ. Տ. (առկայության դեպքում)

«--» 20 թ.